ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- ----------ի 2026 թվականի №-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №516-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքի 22-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 516-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷՄՇ կանոնների 2-րդ՝

ա. կետի 14-րդ և 15-րդ ենթակետերում «Արտադրող» բառից հետո լրացնել «, Պահեստավորող» բառը.

բ. կետի 14-րդ ենթակետում «Համակարգի օպերատորի» բառերը փոխարինել «Համակարգի օպերատոր» բառերով.

գ. կետի 16.1-ին ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել «, պահեստավորման» բառը.

դ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39.1-ին ենթակետով.

«39.1) **Պահեստավորող՝** էներգիայի պահեստավորման իրավունք ունեցող և փաստացի պահեստավորող անձ, բացառությամբ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում գտնվող կայանի.».

2) ԷՄՇ կանոնների 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող Պահեստավորողների (այսուհետ՝ ԵՊ կայաններ) կողմից էներգիայի պահեստավորման ծառայություն մատուցվում է ՀԾՄ-ին՝ Հանձնաժողովի սահմանած սակագներով,».

3) ԷՄՇ կանոնների 18-րդ կետում «Օրենքով» բառը փոխարինել ««Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք)» բառերով:

4) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին և 28.2-րդ կետերով.

«28.1. ԷՄՇ-ում Պահեստավորողները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի.

1) ԵՊ կայաններ.

2) Օրենքի համաձայն՝ Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիքից հրաժարված՝ մրցակցային պայմաններով գործող Պահեստավորողներ (այսուհետ՝ ՄՊ կայաններ):

28.2. ՄՊ կայանն Օրենքի, լիցենզիայի, ԷՄՇ կանոնների, ԷՄՇ պայմանագրի և ԷՀՑ կանոնների համաձայն ԷՄՇ-ում գնում և վաճառում է էլեկտրական էներգիա, ինչպես նաև մատուցում պահեստավորման ծառայություն:».

5) ԷՄՇ կանոնների 34-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ ենթակետով.

«2.2) բացառապես սեփական կարիքների համար պահեստավորում է էներգիա,».

6) ԷՄՇ կանոնների 37.1-ին կետում «գումարային)» բառից հետո լրացնել « կամ էներգիա պահեստավորող իր կայանի (մեկից ավելի կայանների դեպքում՝ գումարային)» բառերը.

7) ԷՄՇ կանոնների 38-րդ կետում «Բաշխողը» բառից հետո լրացնել «, ԵՊ կայանը» բառը.

8) ԷՄՇ կանոնների 40-րդ կետի 7-րդ ենթակետում «ՊԷԱ կայանից էլեկտրական էներգիայի» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայանից պահեստավորման ծառայությունների» բառերը.

9) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 42.1-ին կետով.

«42.1. Հաղորդողը և Բաշխողը կարող են զբաղվել էներգիայի պահեստավորման գործունեությամբ միայն Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:».

10) ԷՄՇ կանոնների 43-րդ՝

ա. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին ենթակետով.

«3.1) ձեռք է բերում էներգիայի պահեստավորման ծառայություն՝ ԵՊ կայանից,».

բ. կետի 4-րդ ենթակետում «էլեկտրական էներգիայի գնման» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայանից պահեստավորման ծառայությունների ձեռք բերման» բառերը.

11) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 43.2-րդ կետով.

«43.2. ԵՊ կայանն Օրենքի, լիցենզիայի, ԷՄՇ կանոնների, ԷՄՇ պայմանագրի և ԷՀՑ կանոնների համաձայն էներգիայի պահեստավորման ծառայություն է մատուցում ՀԾՄ-ին՝ Համակարգի օպերատորի կարգավարման հրահանգներին համապատասխան՝ հանձնաժողովի սահմանած սակագնով՝ ԷՄՇ և ԷՀՑ կանոններով սահմանած դեպքերում և կարգով:».

12) ԷՄՇ կանոնների 44-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) Պահեստավորողը՝ իր Հաշվառման կետում սպառած և նույն հաշվարկային ամսում էլեկտրական ցանց առաքած էլեկտրական էներգիայի քանակների դրական տարբերության դիմաց:».

13) ԷՄՇ կանոնների 44.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44.1. Հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման և էներգիայի պահեստավորման ծառայության համար վճարում է սպառման համակարգ ունեցող ԷՄՇ այն մասնակիցը, որն ունի ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ, բացառությամբ Արտադրողի, Պահեստավորող կայանի, Հաղորդողի, Բաշխողի և Արտահանողի՝ համաձայն ԷՄՇ կանոնների 26.1-ին գլխի:».

14) ԷՄՇ կանոնների 50-րդ կետի 4-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) ԵՊ կայանները:».

15) ԷՄՇ կանոնների 52-րդ կետում «ՀԷԱ և ԿԷԱ կայանների» բառերը փոխարինել «ՀԷԱ, ԿԷԱ, ԵՊ կայանների» բառերով.

16) ԷՄՇ կանոնների 52.1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ.

«ԵՊ կայանները սեփական կարիքի համար սպառած էլեկտրական էներգիայի դիմաց վճարում են ՀԾՄ-ին՝ սպառած էլեկտրական էներգիայի քանակի և ՀԾՄ-ի առավելագույն գնի արտադրյալի չափով:».

17) ԷՄՇ կանոնների 53-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող կամ այն ստանալու ցանկություն հայտնած ՄԷԱ կամ ՄՊ կայանը չի կարող ընդգրկվել ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող համապատասխանաբար ՄԷԱ կամ ՄՊ կայանի հաշվեկշռման խմբում,».

18) ԷՄՇ կանոնների 54-րդ կետի 3-րդ ենթակետում «ՀԷԱ» բառից հետո լրացնել «, ԵՊ» բառը.

19) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 60.2-րդ կետով.

«60.2. ԵՊ կայանները, ի լրումն ԷՄՇ պայմանագրի, կնքում են նաև Հանձնաժողովի սահմանած հետևյալ պայմանագրերը՝

1) Բաշխողի հետ՝ Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման պայմանագիր.

2) ՀԾՄ-ի հետ՝ էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագիր՝ վերջինիս այդ ծառայությունը մատուցելու նպատակով:».

20) ԷՄՇ կանոնների 61-րդ՝

ա. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին ենթակետով.

«9.1) Պահեստավորողի դեպքում լրացվում է նաև պահեստավորող կայանի՝

ա. տեղակայման հասցեն.

բ. ԷՀՑ կանոններին համապատասխանող Հաշվառման համալիրների տվյալներն՝ ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի, իսկ ենթասպառողի առկայության դեպքում նաև վերջինիս՝ ԷՀՑ կանոններին համապատասխանող Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի.

գ. Օրենքով սահմանված կարգավորման ենթակա գործունեության դեպքում՝ էներգիայի պահեստավորման լիցենզիայով ամրագրված դրվածքային հզորությունը.

դ. էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում.

ե. ՀԾՄ-ի հետ կնքված էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագիրը:».

բ. կետի 10-րդ ենթակետի «ե» պարբերությունում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

գ. կետի 11-րդ ենթակետի «բ» պարբերությունում «(Արտադրողների)» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

21) ԷՄՇ կանոնների 63-րդ՝

ա. կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ՊԷԱ կայանի, ինչպես նաև ՊՄԳ-ի շրջանակում գործող ԵՊ կայանի դեպքում՝ նաև ՊՄԳ-ն,».

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ ենթակետով.

«9) ԵՊ կայանի դեպքում՝ նաև էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման սակագին սահմանելու մասին Հանձնաժողովի որոշումը:».

22) ԷՄՇ կանոնների 71.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«71.1. ՎԷԱ կայանները մինչև Օրենքով սահմանված գնման երաշխիքային ժամկետի ավարտը, իսկ ԵՊ կայանները մինչև Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիքի ժամկետի ավարտը՝ ԷՄՇ կանոնների 70-րդ կետով սահմանված ժամկետում դիմում են Շուկայի օպերատորին Օրենքով սահմանված համապատասխանաբար էլեկտրաէներգիայի գնման երաշխիքային և էներգիայի պահեստավորման երաշխիքային ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող օրվանից, իսկ տվյալ օրը ամսվա 20-25-ն ընկած ժամանակահատվածի հետ համընկնելու դեպքում ամսվա 26-ից հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակը փոխելու կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբում ներառվելու նպատակով: ՎԷԱ կայանի կամ ԵՊ կայանի կողմից սույն կետի համաձայն դիմում չներկայացվելու դեպքում Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում տվյալ կայանի հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակը փոխում է ՀՊԿԻ կարգավիճակի, որը հետագայում կարող է փոխվել տվյալ ԷՄՇ մասնակցի դիմումի հիման վրա: ՎԷԱ կայանի՝ Օրենքով սահմանված գնման երաշխիքային ժամկետը, իսկ ԵՊ կայանի դեպքում՝ Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիքի ժամկետը, ամսվա 20-25-ն ընկած ժամանակահատվածում ավարտվելու դեպքում ավարտի օրվան հաջորդող օրվանից մինչև տվյալ ամսվա 25-ը տվյալ կայանի կողմից առաքված էլեկտրական էներգիան ենթակա է գնման ՀԾՄ-ի կողմից՝ Հանձնաժողովի սահմանած ՀԾՄ նվազագույն սակագնով:».

23) ԷՄՇ կանոնների 73-րդ կետի 1-ին ենթակետում «ԷՄՇ ծառայություններ մատուցողների» բառերը փոխարինել «Շուկայի օպերատորի, Համակարգի օպերատորի, Հաղորդողի, Բաշխողի» բառերով.

24) ԷՄՇ կանոնների 78-րդ կետի 2-րդ ենթակետում «մասնակցի արտադրող կայանը» բառերից հետո լրացնել «, պահեստավորող կայանը» բառերը.

25) ԷՄՇ կանոնների 81-րդ կետում «բացառությամբ ՎԷԱ կայանների» բառերից հետո լրացնել «, ԵՊ կայանների» բառերը.

26) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 91.1-ին կետով.

«91.1. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտը Պահեստավորողի դեպքում պարունակում է նաև հետևյալը.

1) տեղակայման հասցեն.

2) Հաշվառման համալիրների տվյալներն՝ ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի.

3) Օրենքով սահմանված կարգավորման ենթակա գործունեության դեպքում՝ էներգիայի պահեստավորման լիցենզիայով ամրագրված դրվածքային հզորությունը.

4) էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում,

5) ՀԾՄ-ի հետ կնքված էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագիրը:».

27) ԷՄՇ կանոնների 92-րդ կետի 5-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը, իսկ «կայանի» բառը փոխարինել «կայանների» բառով.

28) ԷՄՇ կանոնների 92.1-ին կետի 2-րդ ենթակետում «(Արտադրողների)» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

29) ԷՄՇ կանոնների 99-րդ՝

ա. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1) Պահեստավորողները, բացառությամբ ԵՊ կայանի, ներկայացնում են լիցքավորման և լիցքաթափման ժամային գրաֆիկները, սեփական կարիքների և կորուստների համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի պահանջարկը յուրաքանչյուր կայանի համար առանձին՝ տարեկան կտրվածքով,».

բ. կետի 6-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորող կայանի լիցքավորման և լիցքաթափման» բառերը.

30) ԷՄՇ կանոնների 101-րդ կետում «արտադրությունը» բառից հետո լրացնել «, պահեստավորումը» բառերը.

31) ԷՄՇ կանոնների 108-րդ կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) մատուցվող էներգիայի պահեստավորման ծառայության ծավալները՝ հաջորդող սակագնային տարվա համար՝ որպես էներգիայի այն առավելագույն քանակություն, որը ԵՊ կայանը պարտավոր է և տեխնիկապես ունակ է պահեստավորելուց հետո հետագայում առաքելու էլեկտրաէներգետիկական համակարգ՝ անկախ տվյալ ժամանակահատվածում այդ կարողությունը մասնակիորեն կամ ամբողջությամբ օգտագործելու հանգամանքից,

եթե պահեստավորման ծառայության չօգտագործումը պայմանավորված է Համակարգի օպերատորի Կարգավարմամբ կամ Հաղորդման ցանցում կամ Բաշխման ցանցում առաջացած սահմանափակումներով:».

32) ԷՄՇ կանոնների 108.1-ին կետում «ՊԷԱ կայանները» բառերից հետո լրացնել «, իսկ նույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված էներգիայի պահեստավորման ծառայության քանակները հաստատելու նպատակով դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ԵՊ կայանները» բառերը.

33) ԷՄՇ կանոնների 128-րդ կետում «ՄԷԱ կայանների» բառերից հետո լրացնել «, ՄՊ կայանների,» բառերը.

34) ԷՄՇ կանոնների 136-րդ կետում «ԿԷԱ կայանների» բառերից հետո լրացնել «, ՄՊ կայանների,» բառերը.

35) ԷՄՇ կանոնների 170-րդ կետում «արտադրության» բառից հետո լրացնել «, պահեստավորման» բառը.

36) ԷՄՇ կանոնների 176.1-ին կետում «երկրորդային և պահուստի ապահովման» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման» բառերը.

37) ԷՄՇ կանոնների 176.2-րդ կետի՝

ա. բանաձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

$$«ՊԾԱ_i = \frac{ՍՊ_i}{\sum_{i=1}^{n} ՍՊ_i} \cdot (ՀՋ_{ՀԷԱ} + ԾՎ_{ԵՊ})».$$

բ. 4-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) $ԾՎ_{ԵՊ}$-ն՝ ՀԾՄ-ի կողմից տվյալ ամսում ԵՊ կայանից փաստացի ձեռք բերված պահեստավորման ծառայության դիմաց վճարման ենթակա գումարն է (դրամ):».

38) ԷՄՇ կանոնների 176.3-րդ կետի բանաձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

$$«ՊԾԱ_{ԵՄ} = \frac{ՍՊ_{ԵՄ}}{\sum_{i=1}^{n} ՍՊ_i} \cdot (ՀՋ_{ՀԷԱ} + ԾՎ_{ԵՊ}) - ՀՋՀԷԱ_{ԵՄ}».$$

39) ԷՄՇ կանոնների 176.5-րդ կետում «34-րդ գլխով» բառերը փոխարինել «34-րդ և 34.1-ին գլուխներով» բառերով.

40) ԷՄՇ կանոնների 176.6-րդ կետի 1-ին ենթակետում «ՊԷԱ կայանների և ՎԷԱ կայանների» բառերը փոխարինել «ՊԷԱ կայանների, ՎԷԱ կայանների և ԵՊ կայանների» բառերով.

41) ԷՄՇ կանոնների 198-րդ կետում «Արտադրողների» բառից հետո լրացնել «, Պահեստավորողների» բառը.

42) ԷՄՇ կանոնների 217.1-ին կետում «ՀԷԱ կայանին (ՀԷԱ կայաններին)» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման համար ԵՊ կայանին» բառերը.

43) ԷՄՇ կանոնների 217.3-րդ կետում «պահուստի ապահովման» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման» բառերը.

44) ԷՄՇ կանոնների 217.5-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունում «պահուստի ապահովման» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման» բառերը, իսկ «ՀԷԱ կայանին (ՀԷԱ կայաններին)» բառերից հետո՝ « կամ ԵՊ կայանին» բառերը.

բ. երկրորդ նախադասությունում «վճարումներ կատարելու համար» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման համար ԵՊ կայանից ձեռք բերված էներգիայի պահեստավորման ծառայության դիմաց վճարում կատարելու համար» բառերը.

45) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 34.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 34.1 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂԻ ՄՈՏ

228.1. Պահեստավորողի առաքած էլեկտրական էներգիան հաշվառվում է յուրաքանչյուր կայանի համար առանձին: Առևտրային Հաշվառման համալիրը պետք է տեղադրվի համաձայն ԷՀՑ կանոնների պահանջների:

228.2. Շուկայի օպերատորը պարտավոր է Պահեստավորողի առաքած և սպառած էլեկտրական էներգիան հաշվառել՝

1) Պահեստավորող-Հաղորդող Սահմանազատման կետում.

2) Պահեստավորող-Բաշխող Սահմանազատման կետում.

3) Պահեստավորող-սպառող Սահմանազատման կետում:

228.3. ԷՄՇ-ում ԵՊ կայանի մատուցած էներգիայի պահեստավորման ծառայության Առևտրային հաշվառումը Շուկայի օպերատորը կատարում է համաձայն ԵՊ կայանի և ՀԾՄ-ի միջև կնքված պայմանագրի, ինչպես նաև Համակարգի օպերատորի կողմից տրված Կարգավարման կարգադրությունների:

228.4. Մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության դիմաց ՀԾՄ-ն վճարում է ԵՊ կայանին՝ Հանձնաժողովի կողմից տվյալ ամսվա համար հաստատված էներգիայի պահեստավորման ծառայության քանակի և Հանձնաժողովի կողմից սահմանված էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման սակագնի արտադրյալի չափով՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ ամսում ծառայությունն օգտագործվել է մասնակիորեն, թե ամբողջությամբ, եթե չօգտագործումը պայմանավորված է Համակարգի օպերատորի Կարգավարմամբ կամ Հաղորդման ցանցում կամ Բաշխման ցանցում առաջացած սահմանափակումներով:

228.5. ԷՀՑ կանոնների համաձայն տրված Կարգավարման կարգադրությունից ԵՊ կայանի շեղման դեպքում ՀԾՄ-ի կողմից տվյալ կայանին վճարման ենթակա գումարը հաշվարկվում է Հանձնաժողովի կողմից սահմանված էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման սակագնի և հետևյալ չափաքանակների արտադրյալի չափով՝

1) Կարգավարման կարգադրությամբ նախատեսված քանակից պակաս էներգիայի պահեստավորման ծառայություն մատուցելու դեպքում՝ փաստացի մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության քանակի չափով.

2) Կարգավարման կարգադրությամբ նախատեսված քանակից ավելի էներգիայի պահեստավորման ծառայություն մատուցելու դեպքում՝ փաստացի մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության քանակի չափով, բայց ոչ ավելի քան Կարգավարման կարգադրությամբ նախատեսված քանակի և դրա 5 տոկոսի գումարի չափով:».

46) ԷՄՇ կանոնների 240-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունում «հզորության (էլեկտրական էներգիայի)» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայանից ձեռք բերված էներգիայի պահեստավորման ծառայության» բառերը.

բ. երկրորդ նախադասությունում «ՀԷԱ կայաններին» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայաններին» բառերը.

47) ԷՄՇ կանոնների 242-րդ կետի՝

ա. 6-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

բ. 8-րդ ենթակետում «աղբյուրների» բառը փոխարինել «աղբյուրներից էլեկտրական էներգիայի արտադրության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------ի 2026թ.